ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ)VAR (ՄՏՕ) ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Գևորգյան Ա. Է. (Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան)

gevorgyanarman50@aspu.am

ներկայացման ամս.՝ 29.03.2019
գրախոսման ամս.՝ 08.04.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.04.2019

Հոդվածում ներկայացված է ֆուտբոլում ներդրված նոր (VAR-ՄՏՕ՝ մրցավարի տեսաօգնական) համակարգով մրցավարության հոգեբանական տեսանկյունից դրական և բացասական կողմերի վերլուծությունը, ինչպես նաև 2014 և 2018 թվականների ֆուտբոլի աշխարհի առաջնությունների մրցավարական սխալների քանակական և որակական ցուցանիշների համեմատությունը:

Հանգուցային բառեր՝ *մրցավար, աշխարհի առաջնություն, մրցավարի գործունեություն, հուսալիություն, հոգեբանական գործոններ, սխալների քանակ:*

Մրցավարությունը սպորտում միշտ էլ եղել է ամենախոցելի բնագավառը: Միևնույն ժամանակ հենց սպորտի էվոլյուցիոն պահանջմունքն է պարտադրում ստեղծել մրցումների, խաղի կանոնների խիստ հսկիչներ, օրենքի պաշտպաններ՝ մրցավարներ: Զանգվածային լրատվամիջոցներում, հասարակության լայն շրջանակներում բազմիցս ենք ականատես դառնում միջազգային տարբեր մրցումների մրցավարությանն ուղղված բողոքարկումների, դժգոհությունների: Իհարկե, դրանք վերաբերում են բոլոր մարզաձևերին, սակայն ֆուտբոլի մրցավարների առումով կարելի է հաստատել, որ հիմնախնդիրը առավել քան երբևէ ընդունել է նշանակալի չափեր:

Եթե նախորդ դարում հիմնականում ուշադրություն է դարձվել ֆուտբոլի մրցավարների ֆիզիկական պատրաստությանն ու տեսական գիտելիքներին, ապա վերջին երկու տասնամյակում բնագավառի մտահոգ գիտնականներն անդրադառնում են նաև մրցավարների հոգեբանական պատրաստությանը [3, 4]: Ֆուտբոլի սրընթաց զարգացումը, խելահեղ տեմպը, արագությունը հետզհետե առաջացրին հոգեբանական բնույթի մրցավարական բազմաթիվ սխալներ, ակնհայտ դարձան մրցավարների տարածաժամանակային և շարժողական ընկալումների, ուշադրության կենտրոնացվածության, բաշխվածության, պատկերային կամ իրավիճակային հիշողության թերի կամ սխալ հակազդումները, իրավիճակների թյուրըմբռնումները, և պարզ դարձավ, որ ժամանակակից ֆուտբոլի մարտահրավերներին դժվար է դիմակայել մրցավարական երեք հոգանոց կազմով: Նախ՝ ՖԻՖԱ-ն որոշեց մրցավարական բրիգադում ավելացնել ևս մեկ

մրցավար (4-րդ պաշտոնյա), ապա կյանքի կոչվեց 6 մրցավարով խաղի սպասարկման ծրագիրը: Իսկ 2018 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնությունում արդեն ներդրվեց երկար տարիներ քննարկման առարկա դարձած կրկնապատկերի տեսադիտման (VAR) համակարգը (5): Այսպիսով, մրցավարական համակազմն ընդամենը 15-20 տարում երեք հոգուց վերածվեց շուրջ 10 հոգանոց անձնակազմի, սակայն մրցավարի գործունեության և անձի հոգեկան հուսալիության հիմնախնդիրները դեռևս շտկման և բարեկարգման կարիք ունեն:

Հետազոտության նպատակը: Առաջադրվել էր հետևյալ նպատակը. կատարել 2014 թվականի և 2018 թվականի աշխարհի առաջնությունների միջև հոգեբանական բնույթի մրցավարական սխալների համեմատական վերլուծություն և հասկանալ, թե որքանով է մրցավարական նոր համակարգը նպաստել մրցավարի գործունեության հուսալիության բարձրացմանը:

Նպատակին հասնելու համար խնդիր էր դրվել.

1. Գրանցել 2018 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության ընթացքում մրցավարների թույլ տված սխալները և դրանք մեկնաբանել հոգեբանության տեսանկյունից:

2. Վերլուծել կրկնապատկերի տեսադիտման նոր (VAR) համակարգի միջոցով ուղղված սխալները:

3. Համեմատել 2014 թվականի և 2018 թվականի աշխարհի առաջնությունների հոգեբանական բնույթի սխալները:

Հետազոտության մեթոդներն ու կիրառված մեթոդիկաները: Հետազոտության արդյունավետ ընթացքն ապահովելու համար կիրառվել են դիտման (ուղիղ եթեր և տեսադիտում) ու գրանցման (հատուկ մշակված աղյուսակներ, որտեղ ներկայացված են մրցավարի հոգեբանական բնույթի սխալներն ըստ տեսակի, խաղադաշտի հատվածների և ժամանակահատվածի) մեթոդները:

Հարկ է նշել, որ ֆուտբոլի մրցավարների գործունեության մեր հետազոտություններն իրականացվում են 2011 թվականից և մրցավարական սխալները քննարկվում են բացառապես հոգեբանական տեսանկյունից, քանի որ հատկապես բարձր որակավորում ունեցող մրցավարները ամբողջովին տիրապետում են մրցավարական կանոններին և ունեն տեսական փայլուն գիտելիքներ, ֆիզիկական գերազանց պատրաստականություն:

Հետազոտության մշտադիտարկումները ցույց են տվել, որ ֆուտբոլի մրցավարները մինչ նոր համակարգի ներդրումը մեկ խաղի ընթացքում միջին հաշվարկով սխալվում էին 3-4 անգամ, որը կազմում էր որոշումների մոտ 10 %-ը [2]: Մասնավորապես 2014 թվականին հետազոտել ենք Բրազիլիայում կայացած աշխարհի առաջնության 64 հանդիպում, որում մրցավարները կայացրել են 1898 որոշում, որից 200-ը սխալ, այսինքն՝ որոշումների 10,5 %-ը սխալ [1]: Դիտարկված հոգեբանական բնույթի մրցավարական սխալներն ուսումնասիրվել են երեք չափանիշներով՝ ըստ խաղադաշտի հատվածի, ըստ տեսակի և ըստ ժամանակահատվածի:

2014 թվականի աշխարհի առաջնության 64 հանդիպումների մեր կողմից ուսումնասիրված սխալները փաստում են, որ մրցավարներն առավել շատ սխալներ են թույլ տվել տուգանային հրապարակում: Դրանք հիմնականում կապված են եղել 11 մետրանոցների հետ: Այս հարցում ոչ միայն մեծ դեր է խաղում բարդ իրավիճակներում մրցավարի տեսողական ընկալումը, ընտրած դիրքը, տեսադաշտի ծավալի նոսրացումը, այլև որոշման կայացման տատանումը: Մրցավարական սխալները տուգանային հրապարակներում (և ոչ միայն) ավելի շատ են ստացվում երկրորդ խաղակեսում, հատկապես հանդիպման վերջնամասում: Դա ոչ միայն արտահայտվում է մրցավարի ծանր աշխատանքի հետևանքով առաջացած հոգնածությամբ, այլև մրցող թիմերի խաղացողների հոգնածության ֆոնի վրա առաջացած նյարդային լարվածությամբ, դաշտի տերերի թիմի պարտության կամ ոչ ցանկալի արդյունքի պարագայում նաև տրիբունաներում գտնվող երկրպագուների սանձարձակությամբ [2]: Նշված հոգեբանական գործոնները կամա, թե ակամա անդրադառնում են մրցավարի գործունեության վրա. նա որոշում կայացնելիս շատ կարճ ժամանակահատվածում հաշվի է նստում այդ հանգամանքների հետ:

Մրցավարի տեսաօգնական (VAR) համակարգով 2018 թվականի աշխարհի առաջնությունում առաջին անգամ կիրառված մեթոդով մրցավարները 64 հանդիպումներում կայացրել են 1907 որոշում, որից 114-ը սխալ, այսինքն՝ 6 %-ը: Ինչպես նկատում ենք, նոր համակարգի հաջողությունն ակնհայտ է. գրեթե 50 %-ով սխալների քանակը նվազել է: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ ՖԻՖԱ-ի բոլոր ջանքերը մրցավարական սխալները հասցնել նվազագույնի կամ զրոյականի, չեն իրականացել: Պատճառները տարբեր են: Դրանցից ամենակարևորն այն է, որ որոշ մրցավարներ հոգեբանորեն չեն համակերպվել այն հանգամանքի հետ, որ նրանց որոշումները պետք է դրվեն կասկածի տակ, իսկ մրցավարների մյուս հատվածն էլ չափից ավելի էր ապավինել տեսաօգնականի վերջնական որոշմանը: Առաջին դեպքում մրցավարների սեփական կարողությունների գերագնահատված վստահությունը հանգեցնում էր մրցավարական սխալների, որոնք երբեմն ճակատագրական արդյունք էին ունենում թիմերից մեկի համար, իսկ երկրորդ դեպքում՝ անընդհատ դադարների պատճառով խաղը կորցնում էր իր հետաքրքրությունը:

Այսպիսով՝ 2018 թվականի աշխարհի առաջնությունում մրցավարներն իրենց որոշումներում առավել շատ սխալվել են «խաղից դուրս» վիճակ գնահատելիս և կանոնների խախտումներ արձանագրելիս: Էականն այն է, որ կանոնների խախտումների սխալ որոշումների 30 %-ը կատարվել է տուգանային հրապարակում, այսինքն՝ վերաբերվել է 11 մետրանոցների նշանակմանը կամ չնշանակմանը (աղյուսակ 1): Ի դեպ՝ 11 մետրանոցներին վերաբերող սխալները կլինեին ավելի շատ, եթե մրցավարները առաջնության ընթացքում այս առիթով 8 անգամ չդիմեին տեսաօգնականին և դրական լուծում չտային խնդրին: Հարկ է նշել, որ տեսաօգնականի ութ միջամտություններից միայն մեկում է փաստ-

վել, որ մրցավարը ճիշտ որոշում է կայացրել, մնացած դեպքերում մրցավարական սխալ որոշումները ուղղվել են ի օգուտ տուժող կողմի:

Աղյուսակ 1. *Սխալների տեսակային և տոկոսային ներկայացվածությունը.*

1	խաղից դուրս	30
2	խախտումներ	29
3	11 մետրանոց	16
4	դեղին քարտ	14
5	այլ բնույթի սխալներ	11

Ըստ խաղադաշտի հատվածների, մրցավարներն ավելի շատ սխալվել են տուգանային հրապարակում և դրա մատույցներում (աղյուսակ 2), ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ մրցավարների մոտ ամենավճռական պահին տեղի է ունենում որոշումներ կայացնելու վստահության պակաս: Թեև նրանք ունեն տեսական լիարժեք գիտելիքներ, սակայն հատկապես խաղի ելքի վրա ազդելու որոշումներում թույլ են տալիս անինքնավստահություն, ինչը բացառապես կապված է նրանց հոգեբանական պատրաստության հետ:

Աղյուսակ 2. *ԱԱ մրցավարների սխալների տոկոսային ներկայացվածությունը ըստ խաղադաշտի հատվածների.*

1	տ. հրապարակ	30%
2	տ. մերձակայք	25%
3	անկյունային հատվածներ	15%
4	դաշտի կենտ. հատված	15%
5	այլ հատվածներ	9%

Ըստ ժամանակահատվածի սխալները զգալիորեն շատացել են խաղի վերջնամասում (նկար 1): Առաջին հայացքից, իհարկե, թվում է, որ խաղավերջում մրցավարական սխալների ավելացումը կապված է խաղավարների գործառական վիճակի հետ, սակայն տեղյակ լինելով նրանց ֆիզիկական պատրաստվածության մակարդակին, կարող ենք վստահորեն ասել, որ դա ավելի շատ կապված է հոգեկան բեռնվածությանը հոգեբանորեն չդիմակայելու հանգամանքով: Ուշագրավ է նաև այն փաստը, որ 2018 թվականի աշխարհի առաջնության խաղերը վարած մրցավարները, թեև նոր համակարգի կիրառմամբ ընդհանուր առմամբ զգալիորեն պակասեցրել են սխալների քանակը, սակայն խաղավերջում թույլ տված նրանց սխալներն ավելի մեծ թիվ են կազմում, քան 2014 թվականի աշխարհի առաջնությունը վարած մրցավարների մոտ էր արձանագրվել: Այս հանգամանքը ևս փաստում է, որ ֆուտբոլի մրցավարները դերևս լիարժեք չեն հարմարվել մրցավարական նոր համակարգին: Ուստի, հաշվի առնելով վերը նշված բոլոր գործոնները, գտնում ենք, որ

ֆուտբոլի մրցավարությունում պետք է ինտենսիվ կերպով գործի դրվի հոգեբանական համալիր պատրաստության համակարգ:



Նկար 1. *2018 թվականի Աշխարհի առաջնությունը սպասարկած մրցավարների սխալների տոկոսային ներկայացվածությունը ըստ ժամանակահատվածի.*

2018 թվականի աշխարհի առաջնության մրցավարների հոգեբանական բնույթի սխալների ու վերջին երկու աշխարհի առաջնությունների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ արագ ընթացող առարկաների (գնդակ) և արագ տեղաշարժերի նկատմամբ մրցավարներն ունեն պատկերային և իրավիճակային թյուրըմբռնում, խառնաշփոթ իրավիճակներին արդյունավետ հակազդման թերացում, վճռական որոշումներ կայացնելու անհամարձակություն, անվստահություն, խաղի վերջնարդյունքի վրա ազդելու կաշկանդվածություն: Մրցավարի օգնականների (եզրային մրցավարներ) մոտ ուշադրության կենտրոնացվածությունն ու տեսողական ընկալումը ոչ ցանկալի մակարդակի է:

2011 թվականից ֆուտբոլի մրցավարների հոգեբանական բնույթի սխալների վերաբերյալ մեր հետազոտությունները մեզ հանգեցրել են այն եզրակացության, որ ամենից շատ մրցավարները սխալվում են տուգանային հրապարակում, ուստի պնդում ենք, որ նախկինում մեր առաջարկած ֆուտբոլի առավել էքստրեմալ գոտի համարվող տուգանային հրապարակում տեղի ունեցող վիճահարույց դրվագների պարզաբանման համար կիրառվի տեսադիտման համակարգ ոչ միայն աշխարհի առաջնությունում և ֆուտբոլի խոշոր միջոցառումներում, այլև ազգային առաջնություններում, այդ թվում ֆուտբոլի բարձրագույն խմբի Հայաստանի առաջնությունում:

Ֆուտբոլի 2018 թվականի աշխարհի առաջնությունը փաստեց, որ խաղադաշտի ամբողջ տարածքում տեղի ունեցող իրադարձությունների կրկնապատկերի տեսադիտումը անընդհատ դադարների պատճառով բացասական ազդեցություն է ունենում խաղի վրա. կարծես արհեստականորեն սառեցվում է խաղը, որի պատճառով կորում է դիտարժանությունը:

11 մետրանոցների, խաղից դուրս վիճակների և մյուս վիճահարույց իրավիճակների մրցավարական սխալների տոկոսը ավելի պակասեցնելու համար

անհրաժեշտ է ոչ միայն ներդնել մրցավարի տեսաօգնական համակարգը, այլև սպորտի հոգեբանությունում լայն կիրառում գտած հատուկ մեթոդների միջոցով պարզել մրցավարների հուսալիության աստիճանը որոշող անձնային, հուզակամային առանձնահատկությունները, հոգեշարժիչ և այլ ընդունակությունները: Այնուհետև հատուկ վարժությունների միջոցով զարգացնել մրցավարի՝ հատկապես շարժվող օբյեկտի նկատմամբ հակազդումները, շարժվող առարկաների ընկալման, խառնաշփոթ իրավիճակներում ըմբռնման, արագ մտապահման, ճիշտ վերարտադրման կարողությունները, ուշադրության և տեսողական հիշողության հնարավորությունները, իսկ մրցավարի օգնականների մոտ առավելապես ուշադրության կենտրոնացվածությունն ու բաշխումը: Նաև նպաստել մրցավարի և նրա օգնականների միջև փոխհամագործակցության մակարդակի բարձրացմանը:

Գրականություն

1. Գևորգյան Ա. Է. Ֆուտբոլի մրցավարների որոշումների կայացման հուսալիության հոգեբանական գործոնները, /Материалы 19 международного научного конгресса Олимпийский спорт и спорт для всех, Ереван, 2015 «Ясон» ООО, էջ 232-236

2. Геворгян А. Э. Психологические факторы, обеспечивающие надежную деятель-ность футбольного арбитра./Կրթությունը և գիտությունը Արցախում, 2016 3-4, էջ 8-15

3. Ильин Е. П. Психология спорта / Е. П. Ильин. – СПб.: Питер, 2008. – С. 326-333.

4. Кузьмин М. А. Психологические факторы судейской деятельности в футболе: автореф. дис. на соис. уч. степ. канд. психол. наук (13.00.04) / Кузьмин Максим Александрович – СПб., 2004. – 16 с.

5. Как работает система видеопомощи арбитрам на ЧМ-2018. Объясняем // https://www.championat.com/football/article-3476077-kak-rabotaet-sistema-var-na-matchah-chempionata-mira-2018.html

ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ФУТБОЛЬНЫХ АРБИТРОВ К СИСТЕМЕ VAR

Геворгян А.Э. (Армянский Государственный Педагогический Университет, Ереван, Армения)

В статье представлен анализ с психологической точки зрения позитивных и негативных аспектов футбольного судейства арбитра на новую систему судейства (VAR-видеопомощник). А также сравнение количественных и качественных ошибок арбитров, судивших на двух последних чемпионатах мира (2014 и 2018 гг.).

Ключевые слова: *судья, чемпионат мира по футболу, деятельность арбитра, надежность, психологические факторы, количество ошибок.*

PSYCHOLOGICAL ADAPTATION OF FOOTBALL REFEREES TO THE VAR SYSTEM

Gevorgyan A. E. (Armenian State Pedagogical University, Yerevan, Armenia)

The article presents an analysis of the positive and negative aspects of refereeing from the psychological point of view of an arbitrator for a new football refereeing system (VAR-video assistant). As well as a comparison of the quantitative and qualitative errors of the arbitrators who judged at the last two world championships (2014 and 2018).

Keywords: *referee, Soccer World Cup, arbitrator activity, reliability, psychological factors, number of mistakes.*